ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի 97/66/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

(Պաշտոնական տեղեկագիր *L 024, 30.01.1998թ, էջեր 0001 – 0008)*

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 100ա հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (2),

գործելով Պայմանագրի 189 (բ) հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (3) և ելնելով Համաձայնեցման կոմիտեի կողմից 1997 թվականի նոյեմբերի 6-ին հաստատված համատեղ տեքստից,

քանի որ «Անհատական տվյալների մշակման և նման տվյալների ազատ շրջանառության մասով անհատների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՀ հրահանգով [4] պահանջվում է, որ անդամ պետություններն ապահովեն ֆիզիկական անձանց իրավունքները և ազատությունները անհատական տվյալների մշակման և, մասնավորապես, այդ տվյալների գաղտնիության պահպանման մասով՝ նպատակ հետապնդելով ապահովել անհատական տվյալների ազատ շարժը Համայնքի ներսում,

2) քանի որ հաղորդակցությունների գաղտնիությունը երաշխավորվում է մարդու իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերով (մասնավորապես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով) և անդամ պետությունների սահմանադրություններով,

3) քանի որ ներկայումս Համայնքի հանրային հեռահաղորդակցության ցանցերում ներմուծվում են նոր առաջատար թվային տեխնոլոգիաներ, որոնք օգտվողների անհատական տվյալների և այդ տվյալների գաղտնիության պահպանման մասով առաջ են քաշում հատուկ պահանջներ, և քանի որ տեղեկատվական հասարակության զարգացմանը

բնորոշ է հեռահաղորդակցության նոր ծառայությունների ներմուծումը, քանի որ այդ ծառայությունների հաջողված միջսահմանային զարգացումը, ինչպես օրինակ՝ «տեսանյութ ըստ պահանջի» [video-on-demand] ծառայությունը, ինտերակտիվ հեռուստատեսությունը, մասամբ պայմանավորված է օգտվողների վստահությամբ, որ իրենց տվյալների գաղտնիությունը ռիսկի չի ենթարկվի,

4) քանի որ սա վերաբերում է, մասնավորապես, Ինտեգրալ ծառայությունների թվային ցանցի (ISDN) և թվային շարժական ցանցերի ներմուծմանը,

5) քանի որ Խորհուրդը «Մինչև 1992 թվականը հեռահաղորդակցության ծառայությունների և սարքավորումների ընդհանուր շուկա ստեղծելու» իր 1988 թվականի հունիսի 30-ի որոշման մեջ (5) կոչ արեց քայլեր ձեռնարկել անհատական տվյալների պաշտպանության հարցում՝ նպատակ հետապնդելով համապատասխան միջավայր ստեղծելու Համայնքում հեռահաղորդակցության հետագա զարգացումների համար, և քանի որ Խորհուրդը «Մինչև 1992 թվականը Եվրոպական համայնքում Ինտեգրալ ծառայությունների թվային ցանցի (ISDN) ներմուծման համակարգման աշխատանքները ամրապնդելու մասին» իր 1989 թվականի հուլիսի 18-ի որոշման մեջ ընդգծեց անհատական տվյալների պաշտպանության և այդ տվյալների գաղտնիության պահպանման անհրաժեշտությունը,

6) քանի որ Եվրոպական պառլամենտը ընդգծել է անհատական տվյալների պաշտպանության և այդ տվյալների գաղտնիության պահպանման կարևորությունը հեռահաղորդակցության ցանցերում, մասնավորապես, Ինտեգրալ ծառայությունների թվային ցանցի (ISDN) ներմուծման միջոցով,

7) քանի որ հանրային հեռահաղորդակցության ցանցերի ոլորտում պետք է ընդունվեն ֆիզիկական անձանց իրավունքները և ազատությունները և իրավաբանական անձանց օրինական շահերը պաշտպանելու համար հատուկ իրավական, կարգավորիչ և տեխնիկական դրույթներ՝ մասնավորապես, բաժանորդներին և օգտվողներին վերաբերող տվյալների ավտոմատ պահպանման և այդ տվյալների մշակման աճող ռիսկերի առումով,

8) քանի որ անհատական տվյալների, այդ տվյալների գաղտնիության պահպանման և իրավաբանական անձանց օրինական շահերի պաշտպանությանը վերաբերող՝ անդամ պետությունների կողմից ընդունված իրավական, կարգավորիչ և տեխնիկական դրույթները հեռահաղորդակցության ոլորտում պետք է ներդաշնակեցվեն հեռահաղորդակցության ներքին շուկայում խոչընդոտներից խուսափելու համար՝ Պայմանագրի 7(ա) հոդվածում սահմանված նպատակին համապատասխան, և քանի որ այդ ներդաշնակեցումը պետք է

սահմանափակվի այնպիսի պահանջներով, որոնք անհրաժեշտ են երաշխավորելու համար, որ անդամ պետությունների միջև հեռահաղորդակցության նոր ծառայությունների և ցանցերի խթանման և զարգացման համար խոչընդոտներ չստեղծվեն,

9) քանի որ համապատասխան անդամ պետությունները, ծառայություն մատուցողները և օգտվողները Համայնքի իրավասու մարմինների հետ միասին պետք է համագործակցեն համապատասխան տեխնոլոգիաներ ներմուծելու և զարգացնելու հարցում այն դեպքերում, երբ անհրաժեշտ է կիրառել սույն Հրահանգի դրույթներով սահմանված երաշխիքները,

10) քանի որ այդ նոր ծառայությունների մեջ մտնում են ինտերակտիվ հեռուստատեսությունը և «տեսանյութ ըստ պահանջի» ծառայությունը,

11) քանի որ հեռահաղորդակցության ոլորտում կիրառվում է 95/46/ԵՀ հրահանգը, մասնավորապես, այն բոլոր հարցերի առումով, որոնք վերաբերում են սույն Հրահանգի դրույթներով չկարգավորվող հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, այդ թվում՝ վերահսկող մարմնի պարտավորություններին և անհատների իրավունքներին, և քանի որ 95/46/ԵՀ հրահանգը կիրառվում է հանրությանն անհասանելի հեռահաղորդակցության ծառայությունների նկատմամբ,

12) քանի որ սույն Հրահանգը,ինչպես և 95/46/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածը, չի վերաբերում այն հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, որոնք վերաբերում են Համայնքի իրավունքով չկարգավորվող գործունեությանը, և քանի որ անդամ պետությունները պարտավոր են միջոցներ ձեռնարկել, որոնք անհրաժեշտ են հանրային անվտանգության, պաշտպանության, պետական անվտանգության (այդ թվում՝ պետական անվտանգության հարցերին վերաբերելու դեպքում՝ պետության տնտեսական բարեկեցության) և քրեական իրավունքը կիրարկելու համար, և քանի որ սույն Հրահանգը չի արգելում անդամ պետություններին իրականացնելու հեռահաղորդակցության օրինական միջամտություններ վերոնշյալ որևէ նպատակով,

13) քանի որ հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայությունների բաժանորդները կարող են լինել ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, և քանի որ սույն Հրահանգի դրույթները նպատակաուղղված են պաշտպանելու ֆիզիկական անձանց հիմնարար իրավունքները, մասնավորապես, նրանց անհատական տվյալների գաղտնիության պահպանման իրավունքի մասով և իրավաբանական անձանց օրինական շահերը՝ ի լրումն 95/46/ԵՀ հրահանգի, և քանի որ այդ դրույթները որևէ պարտավորություն չեն պարունակում անդամ պետությունների համար 95/46/ԵՀ հրահանգի գործողությունը

ընդլայնելու մասով՝ իրավաբանական անձանց օրինական շահերը պաշտպանելու համար, և քանի որ նման պաշտպանություն ապահովվում է Համայնքի և ներպետական գործող օրենսդրության շրջանակներում,

14) քանի որ մուտքային զանգերի և միացված համարի որոշման ներկայացման և արգելափակման, ինչպես նաև անալոգային կայանին միացված բաժանորդային գծերին զանգի ավտոմատ վերահասցեավորմանը վերաբերող որոշ պահանջներ հատուկ դեպքերում պետք է պարտադիր չլինեն, եթե նման գործողությունները տեխնիկապես անհնար են կամ պահանջում են անհիմն ֆինանսական միջոցներ, և քանի որ շահագրգիռ կողմերի համար կարևոր է նման դեպքերի մասին տեղեկացված լինելը, և, այդ պատճառով, անդամ պետությունները պետք է ծանուցեն Հանձնաժողովին այդ մասին,

15) քանի որ ծառայություն մատուցողները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար իրենց ծառայությունների անվտանգությունը, հնարավորության դեպքում՝ ցանց տրամադրողի հետ միասին, ինչպես նաև պետք է տեղեկացնեն բաժանորդներին բոլոր այն ռիսկերի մասին, որոնք կապված են ցանցի անվտանգության խափանման հետ, և քանի որ անվտանգության գնահատումը կատարվում է 95/46/ԵՀ հրահանգի 17-րդ հոդվածի դրույթի համատեքստում,

16) քանի որ հաղորդակցությունների չթույլատրված հասանելիությունը կանխելու համար պետք է ձեռնարկվեն միջոցներ՝ հանրային հաղորդակցության ցանցերի և հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայությունների միջոցով այդ հաղորդակցությունների գաղտնիությունը պաշտպանելու նպատակով, և քանի որ հաղորդակցությունների չթույլատրված հասանելիությունը որոշ անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ արգելվում է, եթե միայն դա կատարվել է միտումնավոր,

17) քանի որ բաժանորդներին վերաբերող տվյալները, որոնք մշակվում են զանգեր կատարելու համար, պարունակում են տեղեկություններ ֆիզիկական անձանց մասնավոր կյանքի վերաբերյալ և դրանց նկատմամբ գործում է փոխանակված տեղեկությունները պահպանելու իրավունքը, կամ վերաբերում են իրավաբանական անձանց օրինական շահերին, և քանի որ նման տվյալները կարող են պահպանվել, եթե միայն դա անհրաժեշտ է ծառայության դիմաց գանձումներ կատարելու, փոխկապակցման վճարումներ կատարելու նպատակով և միայն որոշակի սահմանափակ ժամկետի ընթացքում, և քանի որ նման տվյալների ցանկացած այլ մշակում, որը հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություն մատուցողը կցանկանա իրականացնել հեռահաղորդակցության իր

ծառայությունների շուկայահանման նպատակով, կարող է թույլ տրվել, եթե միայն բաժանորդը հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություններ մատուցողի կողմից տրված ստույգ և լիարժեք տեղեկությունների հիման վրա տվել է իր համաձայնությունը տվյալների այլ մշակում իրականացնելու՝ ծառայություն մատուցողի մտադրության մասին,

18) քանի որ վերծանված հաշիվների ներմուծումը ավելի լայն հնարավորություն է տվել բաժանորդներին ճշտելու իրենց մատուցված ծառայությունների դիմաց մատուցողի կողմից պահանջվող վճարների հավաստիությունը. քանի որ միևնույն ժամանակ, այն կարող է վտանգել հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություններից օգտվողների տվյալների գաղտնիությունը, և քանի որ, այդ պատճառով, օգտվողների անհատական տվյալների գաղտնիությունը պահպանելու նպատակով անդամ պետությունները պետք է խրախուսեն հեռահաղորդակցության ծառայության այլընտրանքային այնպիսի եղանակներ, ինչպիսիք են այլընտրանքային վճարման համակարգերը, որոնք հնարավորություն են տալիս անանուն և խիստ մասնավոր պայմաններում մուտք գործել հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություններ, օրինակ, հեռախոսային քարտերի և վարկային քարտով վճարման համակարգերի միջոցով, և քանի որ, որպես այլընտրանք՝ անդամ պետությունները նույն նպատակով կարող են պահանջել, որպեսզի զանգ կատարած հեռախոսահամարի որոշակի թվերը ջնջված լինեն վերծանված հաշվի մեջ,

19) քանի որ զանգահարողի հեռախոսահամարի որոշման առումով անհրաժեշտ է պաշտպանել զանգ կատարող կողմի իրավունքը՝ գաղտնի պահել այն հեռախոսահամարը, որից զանգ է կատարվել և զանգ ստացողի իրավունքը՝ հրաժարվել այն զանգերից, որոնք կատարվել են փակ համարներից, և քանի որ հատուկ դեպքերում ընդունելի է հաշվի չառնել զանգահարողի հեռախոսահամարի որոշման արգելքը, և քանի որ որոշ բաժանորդներ, մասնավորապես, թեժ գծերը և նմանատիպ կազմակերպությունները, շահագրգռված են իրենց զանգողների անանունությունը երաշխավորելու հարցում, և քանի որ միացված հեռախոսահամարի որոշման առումով անհրաժեշտ է պաշտպանել զանգ ստացողի իրավունքը և օրինական շահը գաղտնի պահելու այն հեռախոսահամարը, որին զանգ կատարողը փաստացիորեն միացված է, մասնավորապես, վերահասցեավորված զանգերի դեպքում, և քանի որ հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություններ մատուցողները պետք է տեղեկացնեն իրենց բաժանորդներին ցանցում զանգահարողի հեռախոսահամարի և միացված հեռախոսահամարի որոշման հնարավորության և

զանգահարողի հեռախոսահամարի և միացված հեռախոսահամարի որոշման հետ կապված մատուցվող բոլոր ծառայությունների, ինչպես նաև, անհատական տվյալների գաղտնիության պահպանման բոլոր հնարավոր այլընտրանքների մասին, և քանի որ սա բաժանորդներին հնարավորություն կտա տեղեկացված ընտրություն կատարել իրենց անհատական տվյալների գաղտնիության հետ կապված համակարգերից, որոնցից նրանք ցանկանում են օգտվել, և քանի որ անհատական տվյալների գաղտնիության այն հնարավորությունները, որոնք առաջարկվում են ըստ հեռախոսահամարների, պարտադիր չէ, որ հասանելի լինեն որպես ավտոմատ ցանցի ծառայություն, այլ կարող են ձեռք բերվել հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություն մատուցողին ներկայացված պարզ պահանջի դեպքում,

20) քանի որ պետք է գործեն երաշխիքներ, որոնք կպաշտպանեն բաժանորդներին այլ բաժանորդների կողմից զանգի ավտոմատ վերահասցեավորման պատճառով առաջացած անհանգստությունից, և քանի որ նման դեպքերում բաժանորդի համար պետք է հնարավոր լինի հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություն մատուցողներին պարզ պահանջ ներկայացնելու միջոցով արգելափակել իրեն վերահասցեավորված զանգերը, որոնք հասնում են իր վերջնակետային սարքավորմանը,

21) քանի որ պետք է ապահովվի տեղեկագրերի լայն տարածումը և դրանք հանրությանը հասանելի պետք է լինեն, և քանի որ ֆիզիկական անձանց անհատական տվյալների գաղտնիության իրավունքը և իրավաբանական անձանց օրինական շահերը պահանջում են, որ բաժանորդները իրավունք ունենան որոշել, թե իրենց անհատական տվյալները ինչ չափով պետք է հրապարակվեն տեղեկագրում, և քանի որ անդամ պետությունները կարող են տրամադրել այս հնարավորությունը միայն ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդներին,

22) քանի որ երաշխիքներ պետք է տրամադրվեն բաժանորդներին իրենց անհատական տվյալների գաղտնիության պահպանման դեմ ոտնձգությունների համար, որոնք կարող են կատարվել չպահանջված զանգերի կամ հեռաֆաքսի միջոցով, և քանի որ անդամ պետությունները նման երաշխիքներ կարող են տրամադրել միայն ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդներին,

23) քանի որ անհրաժեշտ է ապահովել, որ տվյալների պաշտպանության նպատակներով հեռահաղորդակցության սարքերի տեխնիկական պահանջների ներմուծումը պետք է ներդաշնակեցվի, որպեսզի այն համապատասխանի ներքին շուկայի գործունեությանը,

24) քանի որ նմանապես, ինչպես սահմանված է 95/46/ԵՀ հրահանգի 13-րդ հոդվածում, անդամ պետությունները, մասնավորապես, կարող են սահմանափակել բաժանորդների պարտավորությունները և իրավունքները որոշակի հանգամանքներում, օրինակ ապահովելով, որ հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություններ մատուցողները կարողանան անտեսել զանգահարողի հեռախոսահամարի որոշման արգելքը՝ հանցագործությունները կանխարգելելու կամ բացահայտելու կամ պետության անվտանգության նպատակով,

25) քանի որ ազգային օրենսդրությամբ պետք է սահմանվի դատական պաշտպանության միջոցներ այն դեպքերում, երբ օգտվողների և բաժանորդների իրավունքները խախտվում են, և քանի որ պատժամիջոցներ պետք է պարտադիր կերպով կիրառվեն անկախ այն հանգամանքից, թե այդ անձանց իրավունքները կարգավորվում են մասնավոր թե հանրային իրավունքով բոլոր նրանց նկատմամբ, ովքեր չեն պահպանում սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային միջոցները,

26) քանի որ սույն Հրահանգի կիրարկման ոլորտում օգտակար է կիրառել Անհատական տվյալների մշակման հարցերով անձանց պաշտպանության աշխատանքային խմբի փորձառությունը, որը բաղկացած է անդամ պետությունների ղեկավար մարմինների ներկայացուցիչներից և ստեղծվել է 95/46/ԵՀ հրահանգի 29-րդ հոդվածի համաձայն,

27) քանի որ հաշվի առնելով տեխնոլոգիական զարգացումները և առաջարկվող ծառայությունների հարակից կատարելագործումը՝ անհրաժեշտություն կառաջանա սույն Հրահանգի 6-րդ հոդվածի կիրառության նպատակով 95/46/ԵՀ հրահանգի 31-րդ հոդվածով ստեղծված՝ անդամ պետությունների ներկայացուցիչներից բաղկացած կոմիտեի օգնությամբ կատարել սույն Հրահանգի հավելվածում նշված տվյալների կատեգորիաների տեխնիկական սահմանում՝ նպատակ հետապնդելով ապահովել սույն Հրահանգում սահմանված պահանջների համապարփակ կիրառությունը՝ անկախ տեխնոլոգիայում կատարվող փոփոխությունների, և քանի որ սույն ընթացակարգը կիրառվում է բացառապես այն տեխնիկական նկարագրերի նկատմամբ, որոնք անհրաժեշտ են սույն հավելվածը տեխնոլոգիական զարգացումներին համապատասխանեցնելու համար՝ հաշվի առնելով շուկայական և սպառողական պահանջարկի փոփոխությունները, և քանի որ Հանձնաժողովը համապատասխան կարգով պետք է տեղեկացնի Եվրոպական պառլամենտին սույն ընթացակարգը կիրառելու իր մտադրության մասին, և քանի որ, հակառակ դեպքում՝ կկիրառվի Պայմանագրի 100 (ա) հոդվածում սահմանված ընթացակարգը,

28) քանի որ սույն Հրահանգի դրույթների պահպանումը խթանելու նպատակով՝ անհրաժեշտ է հատուկ միջոցներ ձեռնարկել արդեն կիրառվող տվյալների մշակման առումով այն պահին, երբ սույն Հրահանգի համաձայն կիրարկվող ազգային օրենսդրությունը կմտնի ուժի մեջ,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Առարկան և գործողության ոլորտը

1. Սույն Հրահանգը նախատեսում է ազգային դրույթների ներդաշնակեցում, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության համարժեք մակարդակ, մասնավորապես, հեռահաղորդակցության ոլորտում անհատական տվյալների մշակման մասով այդ տվյալների գաղտնիության պահպանման իրավունքի, ինչպես նաև Համայնքի ներսում նման տվյալների և հեռահաղորդակցության սարքավորումների և ծառայությունների ազատ տեղաշարժի առումով:

2. Սույն Հրահանգի դրույթները մասնավորեցնում և լրացնում են 95/46/ԵՀ հրահանգը՝ 1-ին պարբերության մեջ նշված նպատակներով: Ավելին, դրանք նախատեսում են իրավաբանական անձ հանդիսացող բաժանորդների օրինական շահերի պաշտպանություն:

3. Սույն Հրահանգը չի կարգավորում այն գործունեությունը, որը եվրոպական իրավունքի գործողության շրջանակից դուրս է, ինչպես օրինակ՝ այն գործունեությունը, որը կարգավորվում է «Եվրոպական միության մասին» պայմանագրի V և VI բաժիններով, և ցանկացած դեպքում՝ այն գործունեությունը, որը վերաբերում է հանրային անվտանգությանը, պաշտպանությանը, պետության անվտանգությանը՝ ներառյալ պետության տնտեսական բարեկեցությունը, երբ գործունեությունը վերաբերում է պետության անվտանգության հարցերին, և պետության գործունեությանը՝ քրեական իրավունքի ոլորտում:

Հոդված 2

Սահմանումները

Ի լրումն 95/46/ԵՀ հրահանգում նշված սահմանումների, սույն Հրահանգի նպատակներով՝

ա) «բաժանորդ» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը հանդիսանում է հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություն մատուցողի հետ պայմանագրի կողմ՝ նման ծառայություններ ստանալու նպատակով.

բ) «օգտվող» նշանակում է ցանկացած ֆիզիկական անձ, որը անձնական կամ գործնական նպատակներով օգտվում է հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայությունից , որի դեպքում պարտադիր չէ, որ վերջինս բաժանորդագրված լինի այդ ծառայությանը.

գ) «հանրային հեռահաղորդակցության ցանց» նշանակում է փոխանցման համակարգեր, իսկ հարկ եղած դեպքում՝ կոմուտացիոն սարք և այլ ռեսուրսներ, որոնց միջոցով հնարավոր է մալուխով, ռադիոյով, օպտիկական և այլ էլեկտրամագնիսական միջոցներով ազդանշաններ փոխանցել որոշակի սպասարկման վերջնակետերի միջև, որոնք լրիվ կամ մասամբ օգտագործվում են հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություններ տրամադրելու համար.

դ) «հեռահաղորդակցության ծառայություն» նշանակում է ծառայություններ, որոնք լրիվ կամ մասամբ բաղկացած են հեռահաղորդակցության ցանցեր ազդանշանների փոխանցումից կամ կապուղու միջոցով նման ազդանշանների տրամադրումից՝ բացառությամբ ռադիո և հեռուստահեռարձակումների:

Հոդված 3

Համապատասխան ծառայությունները

1. Սույն Հրահանգը կիրառվում է հանրային հեռահաղորդակցության ցանցեր հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայությունների տրամադրման առնչությամբ անհատական տվյալների մշակման նկատմամբ՝ ներառյալ Ինտեգրալ ծառայությունների թվային ցանցի (ISDN) և հանրային թվային հեռակապի շարժական ցանցերի միջոցով:

2. 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածները կիրառվում են այն բաժանորդային գծերի նկատմամբ, որոնք միացված են թվային կայաններին, ինչպես նաև անալոգային կայանների

բաժանորդային գծերին, եթե դա տեխնիկապես հնարավոր է, և չի պահանջում անհիմն տնտեսական ջանքեր:

3. Անդամ պետությունները պետք է ծանուցեն Հանձնաժողովին այն դեպքերի մասին, երբ տեխնիկապես անհնար է կամ անհիմն ներդրումներ է պահանջվում 8-րդ, 9-րդ և 10-րդ հոդվածների պահանջները կատարելու համար:

Հոդված 4

Անվտանգությունը

1. Հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություն մատուցողը անհրաժեշտության դեպքում, ցանցային անվտանգության մասով հանրային հաղորդակցության ցանցի մատակարարի հետ միասին պետք է անհրաժեշտ տեխնիկական և կազմակերպչական միջոցներ ձեռնարկի իր ծառայությունների անվտանգությունը երաշխավորելու համար: Հաշվի առնելով գիտատեխնիկական զարգացման վերջին արդյունքները և դրանք իրականացնելու հետ կապված ծախսերը՝ այդ միջոցները պետք է ապահովեն անվտանգության այնպիսի մակարդակ, որը համապատասխանում է ներկայացված ռիսկերին:

2. Եթե գոյություն ունի ցանցի անվտանգության խաթարման որոշակի վտանգ, ապա հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություն մատուցողը պետք է տեղեկացնի բաժանորդներին նման վտանգի առկայության, ինչպես նաև դրանք շտկելու հնարավորությունների և դրանց հետ կապված ծախսերի մասին:

Հոդված 5

Հաղորդակցությունների գաղտնիությունը

1. Անդամ պետություններն իրենց ազգային կանոնակարգերի միջոցով պետք է ապահովեն հաղորդակցությունների գաղտնիությունը հանրային հեռահաղորդակցության ցանցի և հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայությունների միջոցով: Մասնավորապես, նրանք պետք է արգելեն հաղորդագրությունների ունկնդրումը, գաղտնալսումը, պահպանումը կամ այլ տեսակի միջամտություն և հսկողություն՝

օգտագործողներից բացի այլ անձանց կողմից՝ առանց օգտվողի կողմից համաձայնություն ստանալու՝ բացառությամբ եթե նման իրավասություն ունեն՝ 14(1) հոդվածի համաձայն:

2. 1-ին պարբերությունը չի գործում հաղորդակցությունների՝ օրինական կերպով թույլատրված ձայնագրման նկատմամբ, երբ այն իրականացվում է օրինական առևտրային գործունեության ընթացքում՝ առևտրային գործարքի կամ ցանկացած այլ առևտրային հաղորդակցության վերաբերյալ ապացույց տրամադրելու նպատակով:

Հոդված 6

Տվյալների հոսքը և դրանց համար վճարումները

1. Բաժանորդներին և օգտվողներին վերաբերող տվյալների հոսքը, որը մշակվում է զանգեր կատարելու համար և պահվում է հանրային հեռահաղորդակցության ցանցի և (կամ) հանրային հեռահաղորդակցության ծառայություն մատուցողի կողմից, պետք է ջնջվի կամ ապահովվի դրա անանունությունը զանգը ընդհատելուն պես՝ չխախտելով 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերությունների դրույթները:

2. Սույն հավելվածում նշված տվյալները կարող են մշակվել բաժանորդներից գանձումներ կատարելու և փոխկապակցման վճարումներ կատարելու համար: Նման մշակումը թույլատրելի է միայն մինչև այն ժամկետը, որի ընթացքում այդ գանձումը հնարավոր է օրինական ճանապարհով վիճարկել կամ կատարել վճարումը:

3. Հեռահաղորդակցության իր ծառայությունները շուկայահանելու նպատակով հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություն մատուցողը կարող է մշակել 2-րդ պարբերությունում նշված տվյալները, եթե բաժանորդը տվել է իր համաձայնությունը:

4. Տվյալների հոսքի և վճարումների մասին տվյալների մշակումը պետք է սահմանափակվի այն անձանց շրջանակով, որոնք հանրային հեռահաղորդակցության ցանցերի և հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություն մատուցողների կողմից իրավասություն ունեն՝ կապված գանձումների և հոսքի կառավարման, հաճախորդների հարցումների, կեղծարարության հայտնաբերման, հեռահաղորդակցության ծառայություններ մատուցողի ծառայությունները շուկայահանելու հետ, և պետք է սահմանափակվի այնպիսի գործողություններով, որոնք անհրաժեշտ են այդ ծառայությունները իրականացնելու համար:

5. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերությունները կիրառվում են՝ չխախտելով գործող օրենսդրության համաձայն տվյալների հոսքի մասին տեղեկացված լինելու՝ իրավասու մարմինների իրավունքը՝ վեճերը, մասնավորապես, փոխկապակցման կամ գանձումներին առնչվող վեճերը կարգավորելու համար:

Հոդված 7

Վերծանումները

1. Բաժանորդները իրավունք ունեն ստանալ չվերծանված հաշիվներ:

2. Անդամ պետությունները կիրառում են ազգային օրենսդրությամբ սահմանված դրույթներ՝ հավասարակշռության բերելու համար վերծանված հաշիվներ ստացող բաժանորդների իրավունքները զանգեր կատարող օգտագործողների տվյալների գաղտնիության պահպանման իրավունքի հետ, օրինակ՝ ապահովելով, որ նման օգտվողները և բաժանորդներն ունենան հաղորդակցության կամ վճարումներ կատարելու բավարար այլընտրանքային մեթոդներ:

Հոդված 8

Զանգահարողի հեռախոսահամարի և միացված հեռախոսահամարի որոշման տրամադրում և արգելափակում

1. Երբ առաջարկվում է զանգահարողի հեռախոսահամարի որոշման ներկայացում, ծառայությունը, ապա զանգ կատարող օգտվողը պետք է պարզ ընթացակարգերով անվճար հնարավորություն ունենա, չեղյալ համարել զանգահարողի հեռախոսահամարի որոշման տրամադրումը՝ յուրաքանչյուր զանգի համար առանձին: Զանգ կատարող բաժանորդը պետք է այդ հնարավորությունից կարողանա օգտվել յուրաքանչյուր բաժանորդային գծի դեպքում:

2. Երբ առաջարկվում է զանգահարողի հեռախոսահամարի որոշման տրամադրում ծառայությունը, զանգ ստացող բաժանորդը պետք է ունենա պարզ ընթացակարգերով, անվճար այդ գործառույթից օգտվելու հնարավորություն ողջամտության սահմաններում՝ կանխարգելելու համար ստացվող զանգերի գծով զանգահարողի հեռախոսահամարի որոշման տրամադրումը :

3. Երբ առաջարկվում է զանգահարողի հեռախոսահամարի որոշման տրամադրում ծառայությունը և եթե զանգահարողի հեռախոսահամարի որոշումը ներկայացված է նախքան զանգ կատարելը, ապա զանգ ստացող բաժանորդը պետք է պարզ ընթացակարգերով կարողանա հրաժարվել այն մուտքային զանգերից, որոնց դեպքում զանգ կատարող օգտվողը կամ բաժանորդը հանել է զանգահարողի հեռախոսահամարի որոշման տրամադրում ծառայությունը:

4. Երբ առաջարկվում է մուտքային զանգերի որոշման տրամադրում ծառայությունը, զանգ ստացող բաժանորդը պետք է պարզ ընթացակարգերով, անվճար կարողանա չեղյալ համարել զանգահարողի հեռախոսահամարի որոշման տրամադրում ծառայության մատուցումը զանգ կատարող օգտվողին:

5. 1-ին պարբերության մեջ սահմանված դրույթը պետք է կիրառվի նաև դեպի երրորդ երկրներ կատարվող զանգերի նկատմամբ, որոնք կատարվել են Համայնքից. 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններում սահմանված դրույթները պետք է կիրառվեն նաև երրորդ երկրներից կատարված մուտքային զանգերի նկատմամբ:

6. Անդամ պետություններն ապահովում են, որ երբ առաջարկվում է զանգահարողի և (կամ) միացված հեռախոսահամարների որոշման տրամադրում ծառայությունը, հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություն մատուցողները տեղեկացնեն հանրությանն այդ մասին, ինչպես նաև 1, 2, 3-րդ և 4-րդ պարբերությունների մեջ սահմանված հնարավորությունների մասին:

Հոդված 9

Բացառությունները

Անդամ պետությունները ապահովում են, որ առկա լինեն թափանցիկ ընթացակարգեր, ըստ որոնց հանրային հեռահաղորդակցության ցանցի և (կամ) հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություն մատուցողը իրավունք ունենա շրջանցել զանգահարողի հեռախոսահամարի որոշման տրամադրման չեղյալ համարելը՝

ա) ժամանակավոր հիմունքով, եթե բաժանորդը դիմում է ներկայացրել չարանենգ զանգեր հայտնաբերելու խնդրանքով, այդ դեպքում, ազգային իրավունքի համաձայն, զանգ կատարող բաժանորդի հեռախոսահամարի տվյալները կպահպանվեն և կտրամադրվեն

հանրային հաղորդակցության ցանցի և (կամ) հանրությանը հասանելի հեռահաղորդակցության ծառայություն մատուցողի կողմից.

բ) բաժանորդային գծերի հիմունքով, այն կազմակերպությունների համար, որոնք զբաղվում են հրատապ զանգերով և անդամ պետության կողմից ընդունվում են որպես նման զանգերով զբաղվող կազմակերպություններ, այդ թվում՝ իրավապաշտպան մարմինները, շտապ օգնության ծառայությունները և հրշեջ խմբերը՝ նման զանգերին արձագանքելու նպատակով:

Հոդված 10

Զանգի ավտոմատ վերահասցեավորում

Անդամ պետություններն ապահովում են, որ ցանկացած բաժանորդ անվճար, պարզ ընթացակարգերով հնարավորություն ունենա կասեցնել զանգի ավտոմատ վերահասցեավորումը, որը կատարվում է երրորդ անձի կողմից այդ բաժանորդի վերջնակետային սարքավորմանը:

Հոդված 11

Բաժանորդների տեղեկագրերը

1. Բաժանորդների՝ տպագիր կամ էլեկտրոնային տեղեկագրերում ներառված անհատական տվյալները, որոնք տրամադրվում են հանրությանը կամ հնարավոր է դրանք ձեռք բերել տեղեկատու ծառայություններից, պետք է պարունակեն տեղեկություններ, որոնք միայն անհրաժեշտ են տվյալ բաժանորդին հայտնաբերելու համար՝ բացառությամբ եթե բաժանորդը իր հստակ համաձայնությունն է տվել լրացուցիչ անհատական տվյալներ հրապարակելու մասին: Բաժանորդն իրավունք ունի անվճար իր պահանջով չընդգրկվել տպագիր կամ էլեկտրոնային տեղեկագրում, պահանջել նշելու,, որ իր տվյալները չեն կարող օգտագործվել անմիջական շուկայահանման նպատակով, մասամբ նշելու իր հասցեն և չնշելու իր սեռը, եթե լեզվաբանորեն դա հնարավոր է:

2. Չնայած 1-ին պարբերության բովանդակությանը՝ անդամ պետությունները կարող են թույլատրել օպերատորներին, որպեսզի վերջիններս վճարում պահանջեն այն բաժանորդներից, որոնք չեն ցանկանում ընդգրկվել տեղեկագրում՝ պայմանով, որ այդ գումարը հակախթանիչ գործոն չհանդիսանա այդ իրավունքից օգտվելու համար, և որ հաշվի առնելով հանրային տեղեկագրերին ներկայացվող որակի համաշխարհային

պահանջները՝ դրա մեջ ներառվեն միայն այն փաստացի ծախսերը, որոնք օպերատորը կատարում է տեղեկագրում ներառվել չցանկացող բաժանորդների ցուցակը փոփոխելու և թարմացնելու համար:

3. 1-ին պարբերությամբ սահմանված իրավունքները կիրառվում են ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդների նկատմամբ: Անդամ պետությունները պետք է նաև երաշխավորեն, որ Համայնքի իրավունքի և գործող ազգային օրենսդրության շրջանակում հանրային տեղեկագրում ընդգրկվելու՝ ֆիզիկական անձ չհանդիսացող բաժանորդների օրինական շահերը բավարար չափով պաշտպանվեն:

Հոդված 12

Չպահանջվող զանգերը

1. Առանց մարդու միջամտության աշխատող ուղղակի շուկայահանման նպատակներով ավտոմատ զանգերի համակարգերը (ավտոմատ հեռախոսներ), ֆաքսիմիլային սարքերը (ֆաքս) կարող են կիրառվել միայն այն բաժանորդների նկատմամբ, որոնք նախօրոք տվել են իրենց համաձայնությունը:

2. Անդամ պետությունները ընդունում են համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար, որ ուղղակի շուկայահանման նպատակով կատարվող՝ չպահանջվող զանգերը 1-ին պարբերությունում չնշված դեպքերում չթույլատրվեն առանց համապատասխան բաժանորդների կամ օգտվողների համաձայնության կամ այն բաժանորդների նկատմամբ, որոնք չեն ցանկանում ստանալ նման զանգեր, ընդ որում՝ այդ այլընտրանքների ընտրությունը սահմանվում է ազգային օրենսդրությամբ:

3. 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված իրավունքները կիրառվում են ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդների նկատմամբ: Անդամ պետությունները պետք է նաև երաշխավորեն, որ Համայնքի իրավունքի և գործող ազգային օրենսդրության շրջանակում ֆիզիկական անձ չհանդիսացող բաժանորդների օրինական շահերը չպահանջվող զանգերի առումով բավարար չափով պաշտպանվեն:

Հոդված 13

Տեխնիկական բնութագիրը և ստանդարտացումը

1. Սույն Հրահանգի դրույթները կիրարկելիս անդամ պետությունները ապահովում են, որ 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն, վերջնակետային կամ հեռահաղորդակցության այլ սարքավորումների հատուկ տեխնիկական բնութագրերի առումով չպարտադրվեն պահանջներ, որոնք կարող են կանխել այդ սարքավորման շուկայահանումը և անդամ պետության ներսում կամ անդամ պետությունների միջև դրանց ազատ շրջանառությունը:

2. Անդամ պետությունները տեխնիկական ստանդարտների և կանոնակարգերի ոլորտում տեղեկատվության տրամադրման ընթացակարգ սահմանող՝ 83/189/ԵՏՀ հրահանգում սահմանված ընթացակարգերի (7) համաձայն տեղեկացնում են Հանձնաժողովին այն դեպքերի մասին, երբ սույն Հրահանգի դրույթները կարող են կիրարկվել, եթե միայն պահանջվեն հատուկ տեխնիկական բնութագրեր:

3. Պահանջի դեպքում՝ հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորման մասին անդամ պետությունների օրենքների և իրավական ակտերի ներդաշնակեցման վերաբերյալ Համայնքի օրենսդրության համաձայն՝ Հանձնաժողովը հատուկ տեխնիկական բնութագրեր կիրառելու համար կմշակի ընդհանուր եվրոպական ստանդարտներ՝ այդ թվում փոխադարձաբար ճանաչելով այդ օրենքների և իրավական ակտերի համապատասխանեցումը և «Հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ստանդարտացման մասին» Խորհրդի 1986 թվականի դեկտեմբերի 22-ի 87/95/ԵՏՀ հրահանգը (8):

Հոդված 14

95/46/ԵՀ հրահանգի որոշ դրույթների կիրառության շրջանակի ընդլայնումը

1. Անդամ պետությունները կարող են ընդունել օրենսդրական միջոցներ՝ սահմանափակելու համար սույն Հրահանգի 5-րդ, 6-րդ հոդվածներում, 8(1), (2), (3) և (4) հոդվածում սահմանված իրավունքների և պարտականությունների շրջանակը, երբ նման սահմանափակումը իրենից ներկայացնում է անհրաժեշտ միջոց՝ ապահովելու համար ազգային անվտանգությունը, պաշտպանությունը, հանրային անվտանգությունը, հանցագործությունների կանխումը, հետաքննումը, հայտնաբերումը և հետապնդումը կամ

հեռահաղորդակցության համակարգի անօրինական օգտագործումը՝ ինչպես նշված է 95/46/ԵՀ հրահանգի 13(1) հոդվածում:

2. Դատական պաշտպանության միջոցների, պարտավորությունների և պատժամիջոցների մասին 95/46/ԵՀ հրահանգի III գլխի դրույթները կիրառվում են սույն Հրահանգի համաձայն ընդունված ազգային օրենսդրությամբ սահմանված դրույթների և սույն Հրահանգից բխող անձի իրավունքների մասով:

3. Անհատական տվյալներ մշակելու մասով անհատների պաշտպանության աշխատանքային խումբը, որը ստեղծվել է 95/46/ԵՀ հրահանգի 29-րդ հոդվածի համաձայն, իրականացնում է այդ հրահանգի 30-րդ հոդվածում սահմանված՝ հեռահաղորդակցության ոլորտում հիմնարար իրավունքների և ազատությունների և օրինական շահերի պաշտպանության հարցերով աշխատանքներ, որոնք սույն Հրահանգի կարգավորման առարկան են:

4. Հանձնաժողովը, 95/46/ԵՀ հրահանգի 31–րդ հոդվածով ստեղծված Կոմիտեի աջակցությամբ, տեխնիկապես նախատեսում է հավելվածը՝ սույն հոդվածում նշված ընթացակարգի համաձայն: Վերը նշված Կոմիտեն հրավիրում է իր հանդիպումները, մասնավորապես, սույն Հրահանգում կարգավորվող խնդիրների շուրջ:

Հոդված 15

Սույն Հրահանգի կիրարկումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքներ, կանոնակարգեր և վարչական դրույթներ ոչ ուշ, քան 1998թ. հոկտեմբերի 24–ը:

Շեղում կատարելով առաջին ենթապարբերությունից՝ անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի 5-րդ հոդվածի համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքներ, կանոնակարգեր և վարչական դրույթներ ոչ ուշ, քան 2000 թվականի հոկտեմբերի 24–ը:

Երբ անդամ պետությունները ձեռնարկեն այս միջոցները, դրանք պետք է պարունակեն սույն Հրահանգին արված հղում կամ դրանց կից պետք է ներկայացված լինի նման հղում՝

իրենց պաշտոնական հրապարակման պահին: Նման հղում կատարելու կարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

2. Շեղում կատարելով 6(3) հոդվածից՝ սույն Հրահանգի համաձայն ազգային օրենսդրությամբ սահմանված դրույթներն ուժի մեջ մտնելու պահին արդեն կիրառվող տվյալների մշակման համար համաձայնություն պետք չէ: Նման դեպքերում բաժանորդները տեղեկացվում են այդ մշակման մասին, և եթե նրանք անդամ պետության կողմից սահմանված ժամկետում անհամաձայնություն չեն արտահայտում, ապա համարվում է, որ նրանք տվել են իրենց համաձայնությունը:

3. 11-րդ հոդվածը չի կիրառվում տեղեկագրերի այն հրապարակումների նկատմամբ, որոնք կատարվել են նախքան սույն Հրահանգի համաձայն ազգային օրենսդրությամբ սահմանված դրույթներն ուժի մեջ մտնելը:

4. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ազգային օրենսդրության համաձայն ընդունված դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 16

Հասցեները

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1997 թվականի դեկտեմբերի 15-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ Ջ. Մ. ՀԻԼ–ՌՈԲԼԵՍ

Խորհրդի կողմից՝

Նախագահ Ժ.–Կ. ՅՈՒՆԿԵՐ

1) ՊՏ թիվ C 200, 22.07.1994թ., էջ 4:

2) ՊՏ C 159, 17.06.1991թ., էջ 38:

3) Եվրոպական պառլամենտի 1992 թվականի մարտի 11–ի եզրակացությունը (ՊՏ, C 94, 13.04.1992 թ., էջ 198): Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 12–ի ընդհանուր դիրքորոշումը (ՊՏ, C 315, 24.10.1996 թ., էջ 30) և Եվրոպական պառլամենտի 1997 թվականի հունվարի 16–ի որոշում (ՊՏ, C 33, 03.02.1997 թ., էջ 78): Եվրոպական պառլամենտի 1997 թվականի նոյեմբերի 20–ի որոշումը (ՊՏ C 371, 08.12.1997թ.): 1997 թվականի դեկտեմբերի 1-ի Խորհրդի որոշումը:

4) ՊՏ L 281, 23.11.1995թ., էջ 31:

5) ՊՏ C 257, 04.10.1988թ., էջ 1:

6) ՊՏ C 196, 01.08.1989թ., էջ 4:

7) ՊՏ L 109, 26.04.1983թ., էջ 8: 94/10/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 100, 19.04.1994 թ., էջ 30):

8) ՊՏ L 36, 07.02.1987թ., էջ 31: 1994 թվականի Անդամակցության մասին ակտով վերջին անգամ փոփոխված հրահանգ:

ՀԱՎԵԼՎԱԾ

Տվյալների ցանկը

6(2) հոդվածում նշված նպատակով, կարելի է մշակել հետևյալ տվյալները՝

տվյալներ, որոնք պարունակում են՝

– բաժանորդի կայանի համարը կամ նույնականացումը.

– բաժանորդի հասցեն և կայանի տեսակը.

– հաշվետու ժամանակահատվածում գանձման ենթարկվող միավորների ընդհանուր քանակը.

– զանգ ստացող բաժանորդի համարը.

– կատարված զանգերի տեսակը, մեկնարկման ժամանակը և տևողությունը և (կամ) փոխանցված տվյալների ծավալը.

– զանգի (ծառայության) ամսաթիվը.

– վճարումների մասին այլ տեղեկություններ, ինչպես օրինակ՝ կանխավճարները, մասնավճարները, անջատումները և հիշեցումները.